ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04.03.2021թ.
ժամը 11^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, մայոր Գ. Սարգսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱՎ ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Զաքոյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի պետ, Ա.Ամիրյան:
Բացակայում է ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ, ենթասպա Ծ. Մելքումյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ
2	«ՍԵԿՈՆԵՏ» ՍՊԸ
3	«Միկրորինգ» ՍՊԸ
4	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ
5	«Էրոդավ» ՍՊԸ
6	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
7	«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ
8	«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ
9	«Ջի-Էս-Սի» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «ՍԵԿՈՆԵՏ» ՍՊԸ-ի, «Միկրորինգ» ՍՊԸ-ի, «Էրոդավ» ՍՊԸ-ի, «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի, «Ջի-Էս-Սի» ՍՊԸ-ի՝ հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Մասնավորապես՝

«ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից քաղաքացի Սոնա Ամիրխանյանին տրված լիազորագրով «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն լիազորել է Սոնա Ամիրխանյանին հանդես գալու ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգին՝ «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի մրցութային հայտի փաթեթը բեռնելու համար: Այսինքն Սոնա Ամիրխանյանը հայտում ներառված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու լիազորություն չունի: Բացի այդ ներկայացված հավելված 1.1-ում 3-րդ չափաբաժնում ընդգրկված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է ՏԱ-57 տիպի կամ համարժեք դաշտային հեռախոս.....: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ում նշված է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն մասնակցում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին, այնինչ հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ հայտ ներկայացվել է վերը նշված ընթացակարգի 5-րդ չափաբաժնին:

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում 1-ին, 6-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքների հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ում գնանշման հարցման փոխարեն բոլոր տեղերում նշված է բաց մրցույթ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 04.03.2021թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: 11.03.2021թ. շարունակելով նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Ամիրյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 9 մասնակից.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների անվանումները	գնային առաջարկները առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը	Հաղթող կազմակերպության անվանումը
1	Հեռախոսային կայաններ	հատ	4	30,000,000	«Էրոդավ» ՍՊԸ	21,625,000	4,325,000	25,950,000	«Էրոդավ» ՍՊԸ
					«Էյչ Գրուպ» ՍՊԸ	24,800,000	4,960,000	29,760,000	
2	Հեռախոսային կոմուտատորներ	հատ	100	33,000,000	«Էրոդավ» ՍՊԸ	25,000,000	5,000,000	30,000,000	«Էրոդավ» ՍՊԸ
					«ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ	32,800,000	0	32,800,000	
3	Հեռախոսային սարքեր	հատ	400	11,600,000	«ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ	11,500,000	0	11,500,000	բանակցություն
4	Մոդեմներ	հատ	40	28,800,000	«Միկրորինգ» ՍՊԸ	23,990,000	4,798,000	28,788,000	բանակցություն
5	Բաշխիչ ցանցի փոխակերպիչ	հատ	120	16,800,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	13,140,000	2,628,000	15,768,000	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ
					«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	8,970,000	1,794,000	10,764,000	
6	Ձայնագրող սարքեր	հատ	10	11,500,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	9,341,750	1,868,350	11,210,100	«Ջի-Էս-Սի» ՍՊԸ
					«Ջի-Էս-Սի» ՍՊԸ	8,166,666.67	1,633,333.33	9,800,000	
7	Ձայնագրող սարքեր	հատ	25	10,500,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	6,380,000	1,276,000	7,656,000	«Ջի-Էս-Սի» ՍՊԸ
					«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ	6,237,500	1,247,500	7,485,000	
					«Ջի-Էս-Սի» ՍՊԸ	4,916,666.67	983,333.33	5,900,000	
					«ՍԵԿՈՆԵՏ» ՍՊԸ	6,041,625	1,208,325	7,249,950	

8	Ձայնագրող սարքեր	հատ	20	14,000,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	11,500,000	2,300,000	13,800,000	
					«Ջի-Էս-Սի» ՍՊԸ	9,550,000	1,910,000	11,460,000	«Ջի-Էս-Սի» ՍՊԸ
					«ՄԵԿՈՆԵՏ» ՍՊԸ	11,166,650	2,233,330	13,399,980	
9	Տոներային քարտրիջներ	հատ	120	23,760,000	«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ	19,800,000	3,960,000	23,760,000	բանակցություն

Ըստ ներկայացված փաստաթղթերի «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 9-րդ չափաբաժիններին հայտ են ներկայացրել մեկ մասնակից՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները 11.03.2021թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 16.03.2021թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նշված օրը և ժամին բանակացություններին ներկայացավ միայն «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ն, վերջինս առաջարկած գինը թողեց առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Ամիրյան)

4.1 19.03.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Էրոդավ» ՍՊԸ-ն, 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ՍՄԱՐԹ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն, 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Միկրորինգ» ՍՊԸ-ն, 5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Ջի-Էս-Սի» ՍՊԸ-ն, 9-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ա. Ամիրյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Գ. Սարգսյան

Գնահատող, Խ. Երիցյան

Գնահատող, Ռ. Զադոյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան